ՆԱԽՆԻՆԵՐԻ ԿԱՆՉԸ

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԴԵՄԻՐՃՅԱՆ
(ծնվ. 1965 թ.)

Ծնվել է Երևանում՝ մտավորականի ընտանիքում:

1982-ին գերազանցությամբ ավարտել է Վանաձորի թիվ 1 միջն. դպրոցը, 1987-ին՝ ԵՊՀ բանասիրական ֆակուլտետը: 2006-ին պաշտպանել է ատենախոսություն՝ նվիրված սփյուռքահայ գրականությանը: Եղել է մանկավարժ և լրագրող, աշխատակցել «Հայրենիքի ձայն» և «Հայաստանի Հանրապետություն» թերթերին:

Արմենուհի Դեմիրճյանը 2016 թվականից ղեկավարում է Սիլվա Կապուտիկյանի տուն-թանգարանը:

ՀԱՅԿԻ ԼԱՅՆԱԼԻՃԸ

Անլուսին գիշեր էր: Մութ երկնքում աստղերն ուղղակի գվվում էին, պեծպեծին տալիս: Հինգ օրում Հայկի թեթև զորքը լավ զինավարժվել էր, ընդառաջ գնացել Բելի բանակին ու վրաններ խփել Աղի ծովակի մոտակայքում: Հաշված ժամեր էին մնացել մեծ բախմանը, և Հայկը ուզեց տեսնել՝ ինչ է ասում իրեն երկինքը: Նա նայեց Ծիր Կաթինին, դիտեց աստղերի տեղաբաշխումը և անհանգիստ ասաց.

– Գիշերը կես է լինում, Արամանյակ. որտեղ է Կադմոսը:

– Թրերի սրությունն է ստուգում, հայր: Առաջապահ գնդի բոլոր թրերը ոսկու պես փայլեցրել է:

– Ապա մոտ բեր աղեղս:

– Լայնալիճը:

– Այո՛, հայրդ միթե սովորական աղեղ է քաշելու:

– Ահա՛: Ինչ էլ ծանր է: Կադմոսը սրա լարն էլ է մի լավ ձգել:

– Տո՛ւր՝ նորից ստուգեմ: Ընտի՛ր է: Կադմոսի գործը միշտ էլ փայլուն է: Իսկ երեքթևյան նետերի պակաս չկա՛,– անհանգստացավ Հայկը:

– Կապարձները լցրել ենք, որքան սիրտդ ուզի:

– Դե՛, մի նե՛տ տուր՝ փորձեմ: Ծայրին կրա՛կ դիր, տեսնենք՝ քամու սուլոցը մինչև ո՞ւր եմ հասցնելու:

Մինչ Արամանյակը կրակը կվառեր, Հայկը ձախ ոտքն առաջ դրեց, բռնեց աղեղը, ստուգեց լարի ձգվածությունը, ապա այնպես վարժ արձակեց նետը, որ Արամանյակն ուղղակի հիացավ.

– Հա՛յր իմ, որքա՛ն զորեղ են բազուկներդ: Նետը կտրեց-անցավ գետն ու հասավ բաբելացիների ճամբար:

– Սիրտները թող ճաքի: Բայց աղեղիս ներքևի ոտքը ոնց որ խախուտ է: Ինչի՞ պոզով ես լայնացրել:

– Երեք տարեկան արջառի:

– Սրան գոմեշի պոզ է պետք: Բե՛ր՝ փոխենք: Դեռ ժամանակ կա:

– Դու մի՛ չարչարվիր, հա՛յր, ես կփոխեմ: Վրանում մի քանի ընտիր պոզ ունեմ: Ո՞րն ես հավանում:

– Այդ սև կոտոշը լավ մեծ է: Դա՛ դիր, թող աղեղը լայնանա, որ թևս մինչև վերջ բացեմ:

– Հրամանդ ի կատար: – Հիմա ներքևինն էլ, վերևինն էլ կփոխեմ ու կաշեփոկերով մի լավ կկապեմ, որ ուզածիդ պես ամուր լինեն: Դու մի քիչ ա՛չքդ կպցրու, հա՛յր:

– Ճիշտ ես ասում: Բայց ապա երկնքի՛ն նայիր:

– Օ՜, աստղը... Աստղը երևա՛ց: Երկնային աղեղի ներքևի ոտքը մեզ նշան է տալիս, հա՛յր: Իսկական հրաշք է: Դու վաղը կշամփրես Բելին:

– Աչքս էլ չեմ թարթի: Ես այնպե՛ս կպատռեմ դրա կուրծքը, որ պապերիս երկիր հասած զորքը սարսափած փախչի: Կարծում են, որ մորեխի պես հավաքվել են, ուրեմն իրավունքնե՞ր պիտի բանեցնեն Թորգոմյան Հայկի ազատության վրա:

– Երբե՛ք, երբե՛ք, սիրելի՛դ իմ հայր: Դա այլևս չի լինի: Դեռ Բաբելոնում բոլոր հսկաները զարմանում էին քո ուժի ու խելքի վրա,

բայց առավել պատկառում էին քո ազնվությունից: Դու միակն էիր, որ հրաժարվեցիր ենթարկվել Բելին: Դու վաղը տապալելու ես Բելին:

– Մեր բարձրիկ սարերում դա շատ իրական է թվում: Մենք ընդ-միշտ պիտի մոռանանք գերության ճահիճները: Բաբելոնը, որքան էլ հարուստ ու սիրուն, մեզ համար գարշահոտ ճահիճ է: Իմ ու քո զարմը այսուհետև պիտի ապրի ազատ ու հաղթանակած:

– Հայկի անունը կհավերժացնի նաև երկինքը, պանծալի՛ հայր: Ապա նայի՛ր, թե երկնքի Աղեղնավորը՝ քո իսկ երկվորյակը, ինչքան պայծառ է շողում մեր գլխավերևում:

– Տո՛ւր աղեղս, իմ քա՛ջ զավակ: Տես՝ ձեռքիս թափը հերիքո՞ւմ է մեծացրած լայնալիճը քաշելուն...

– Երկինքը վկա, դու ամենահզոր նետաձիգն ես: Նետն այս անգամ ավելի երկար ճանապարհ կտրեց:

– Ուրեմն լույսը թող շուտ բացվի:

– Լույսը բարի կբացվի մեր երկրի վրա: Աստղերն արդեն կանխագուշակել են, հա՛յր...

Բառային աշխատանք

1. Տրված բառերում լրացրո՛ւ բաց թողնված տառերը:

Ուղ_ակի, ընդառա_, երեքթ_յան, ար_ակել, խա_ուտ, կապար_, ար_առ, նետաձի_:

2. Տեքստում գտի՛ր *անսովոր*, *աջ*, *անտեր*, *վերև*, *փոքր*, *աղքատ*, բառերի հականիշները:

3. Տեքստում գտի՛ր *վառվռուն*, *շաչել*, *ակնածել*, *արտասովոր*, *ջոկած*, *հմուտ*, *ընդհարում*, *չնաշխարհիկ* բառերի հոմանիշները և գործածի՛ր ընդարձակ նախադասությունների մեջ:

4. Տեքստում գտի՛ր հոմանիշ և հականիշ ունեցող չորս զույգ և դրանցով նախադասություններ կազմիր:

5. Տրված տեքստում առարկա ցույց տվող բառերը ընդգծի՛ր մեկ, գործողություն ցույց տվող բառերը՝ երկու գծով (խմբային աշխատանք):

Անլուսին գիշեր էր: Մութ երկնքում աստղերն ուղղակի *գվվում* էին, *պեծպեծին* տալիս: Հինգ օրում Հայկի թեթև զորքը լավ զինավարժվել էր, ընդառաջ գնացել Բելի բանակին ու վրաններ խփել Աղի ծովակի մոտակայքում: Հաշված ժամեր էին մնացել մեծ բախմանը, և Հայկն ուզեց տեսնել՝ ինչ է ասում իրեն երկինքը:

6. Ընդգծի՛ր տրված նախադասությունների գլխավոր և երկրորդական անդամները (ենթական՝ մեկ, ստորոգյալը՝ երկու, լրացումները՝ ալիքաձև գծերով):

Զորքը զինավարժվել էր: Կադմոսի գործը միշտ փայլուն է: Աստղը երևաց: Դու վաղը կշամփրես Բելին: Հայկը ամենահզոր նետաձիգն է:

Տեքստային աշխատանք

1. Վարժ կարդա՛ տեքստը՝ համառոտ վերաշարադրի՛ր դեպքերի հաջորդականությունը:

2. Թվարկի՛ր բնագրի հերոսներին՝ մեկնաբանելով յուրաքանչյուրի արարքի դրդապատճառները (զույգային աշխատանք):

3. Ստեղծագործության բովանդակությունը հաղորդելիս կիրառի՛ր հեղինակային բառապաշարը:

4. Տեքստից դո՛ւրս գրիր քեզ համար հետաքրքիր դրվագներ, արտահայտություններ և մեկնաբանի՛ր:

5. Համեմատի՛ր առասպելի բնագիրը նրա գեղարվեստական մշակման հետ, գտի՛ր նմանություններ և տարբերություններ (Վենի գծակարգ):

6. Տեքստում գտի՛ր պատկերավոր արտահայտությունները և դրանք կիրառի՛ր խոսքում:

7. Տեքստի անծանոթ բառերն ու արտահայտությունները ներկայացրո՛ւ հոմանշային բացատրություններով:

8. Մեկնաբանի՛ր Մ. Խորենացու «Քաջերի սերունդները քաջեր են» թևավոր խոսքի իմաստը: